YAVAŞ GAMATS
GAMATS YAVAŞ

16 Ağustos 2014

Aida G.
Gerçek G.
Halil İ. K.
Hripsime K.
İsmail K.
Mehmet O. Ç.
Metaksya D.
Taguhi G.
Özlem D.

YAVAŞ GAMATS - YAZ OKULU YARI RESMİ GAZETESİ 11 - 17 AGUSTOS 2014 ● SAYI: 4

# Բարեկամությունը սկսվում է համատեղ հիշողություններից

Մետաքսյա




<<Յավաշ-Կամաց>>-ի մասնակիցների օրակարգը չափազանց հագեցած է: Երիտասարդներն ունեն շատ քիչ ժամանակ, ծրագրի գործողություններից դուրս իրենց առօրյան



կազմակերպելու համար: Իսկ թե երբ, որտեղ և ինչպես են նրանք անցկացնում իրենց ազատ ժամանակը, պատմում են հենց իրենք:

Լուսինեն իր ազատ ժամանակն անց է կացնում հայ և թուրք ընկերների հետ՝ քննարկումների և հաղորդակցման միջոցով փորձելով ավելի լավ հասկանալ նրանց: << Ես սովորեցի նաև բիլիարդ խաղալ>>,- ինձ հետ զրույցում պատմում է Լուսինեն:

Վարդանն ազատ ժամանակ գնում է ֆիթնես, մարզվում է և զբոսնում:

Յասանիլն ու Սելիմը նշեցին, որ ազատ ժամանակը քիչ է լինում և նրանք այդ ժամանակ զբոսնում են ընկերների հետ կամ այգում նստած զրուցում:

<<Խմբային աշխատանքի վրա եմ աշխատում: Ընկերներիս հետ տարբեր խաղեր ենք խաղում, զրուցում, զբոսնում>>,- պատմում է Անահիտը:

Հուսեյնն իր ազատ ժամանակ շփվում է, մերձենում հայերի հետ՝ ազգայնականությունը հասկանալու համար, իսկ Սեզարն ասեց, որ ուղղակի վայելում է իր ազատ ժամանակը, ընկերների հետ միասին զրուցում հայերի և նրանց հարցի մասին:

Թագուհին վայելում է իր ազատ ժամանակը, Առնոն՝ փորձում է այնպես անել, որ ազատ ժամանակ չունենա:

<<Խոսում եմ ընկերներիս



հետ, խաղում վոլեյբոլ, զրուցում ընկերներիս հետ և կիսում ստացած զգացմունքներն ու տպավորությունները>>,- իր ազատ ժամանակի մասին պատմում է Չիդամը:

Հալիլը, երբ ազատ ժամանակ է ունենում, զբաղվում է համակարգչով՝ Ֆեյսբուք, Թվիթթեր, Իստագրամ: Խոսում է Ադանայում ապրող իր ընտանիքի հետ և քնում:

Թերևս ամենահետաքրքիր ժամանակն անց է կացնում Վոլոդյան: Նա դասերին մասնակցելուց զատ



այցելում է տեսարժան վայրերը քաղաքի: Եղել է տարբեր մզկիթներում, այցելել է գերեզմանոց: Հաճույքով օգտվում է ազգային խոհանոցի բարիքներից, զբաղվում է լուսանկարչությամբ:

Իսկ ես կառաջարկեմ ամառային դպրոցի այս վերջին օրն անցկացնել հնարավորինս հետաքրքիր, հագեցած: Երգեք, պարեք, ուրախացեք, զրուցեք ինչքան կարող եք շատ: Բարեկամությունը սկսվում է համատեղ հիշողություններից:




Yavaş Gamats Yaz Okulu, Avrupa Birliği tarafından finanse edilen 'Ermenistan-Türkiye Normalleşme Süreci Destek Programı' kapsamında gerçekleşmektedir.
Ամառային դպրոցն իրականացվում է ,Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին ե ծրագրի շրջանակներում Եվրոպական միության ֆինանսավորմամբ:

# "Nezaket de ayrımcılık olabiliyor"

Özlem Dalkıran



Yavaş Gamats katılımcılarından Şebnem Ayna bir öğretmen adayı. Bize yaz okulu ve  benzeri programlar düzenlenirken engellilerin katılımı için özen gösterilmesi gereken noktalara değinerek, sivil toplum örgütlerine yol gösterici önerilerde bulundu.

Şebnem, yaz okulu çağrısını sekreteryasını yürüttüğü Eğitimde Görme Engelliler Derneği sayesinde duymuş. Başvuru formunda görme engeli olduğunu belirtmediğini, bunu özellikle mi yazmadığını sordum: "Sormamışlardı" dedi, "ben de formdaki soruları doldururken parantez açıp da özellikle söylemek istemedim."

"Aslında kabul edilmem diye korkuyordum ama beni sadece engelli olduğum için çağırmalarını da istemedim. Şansımı denedim. Engellilik de eşcinsellik gibi. İnsanların engelli olduğunu sen bilmelerini istediğin zaman öğrenmelerini istiyorsun. Ama formda sorulsaydı söyleyecektim."

Şebnem "Bir başvuru formunda 'engeliniz var mı, nedir' ve 'bu programda sizin ihtiyaçlarınıza göre uyarlanmasını istediğiniz bir durum var mı' diye bir soru olduğunda başvuru yaptığında dikkate alındığının güvencesi oluyor, çünkü hazırlıklı olduklarını biliyorsun" diyor.

Öte yandan pozitif ayrımcılık adına sadece engelli olduğun için kabul edilmenin doğru olmadığını söyleyen Şebnem üniversite sınavlarını ve engellilere ücretsiz ulaşımı da bu bağlamda eleştirdi. Görme engelliler üniversite sınavlarında görsel sorulardan muaf tutuluyor ve artı 25 ek puan alıyorlar. Bu, aynı sınava deliler gibi hazırlanan diğerlerine büyük adaletsizlik oluyor diyor ve cevabın "pozitif ayrımcılık değil, makul uyumlaştırma" olduğunu vurguluyor.

Ücretsiz ulaşımın engellilere evden çıkmaları için bir teşvik olabileceğini söyledim. Cevabı netti: "sokakları erişilebilir kılarlarsa, kılavuz yollar ve rampalar yaparlarsa bizler zaten sokaklara çıkacak, sosyalleşecek ve eğitim görebileceğiz. İşe girecek, hayat kalitemizi yükseltebileceğiz" dedi.

Otelin ve programın kendisi için kolay ve zor yanlarını sorduğumda bir görme engelli için otelin kullanımında sıkıntı olmadığını söyledi. Tek zorluk kahvaltının açık büfe olmasına değindi ama hem personelin hem diğer katılımcıların bu konuda yardımcı olduğunu ifade etti. "Yaz okulu programına baktığımda film gösterimlerinin biraz sıkıntılı olacağının farkındaydım ama altyazılı olacağı aklıma gelmemişti" dedi. Ama bu konuda da ekipten her yardım istediğinde aldığını söyledi. "İlk grup çalışmalarında da bana bir türlü konuşma sırası gelmedi. Diğerlerine 'sen ne düşünüyorsun' diye soruluyor ama bana soran olmuyordu. Sonunda hak verilmez alınır dedim ve ben konuya daldım. Sanırım nasıl davranacaklarını bilemediler, zorlamayalım diye düşündüler. Sonrasında bu sorun olmadı" diyen Şebnem fazla nezaket de ayrımcılık olabiliyor diye uyardı.

Şebnem sohbetimizi bitirirken Helsinki Yurttaşlar Derneği'nin farklı toplumsal kesimlerden öğretmenleri buluşturan çalışmalarına engelli öğretmenleri de katmalarını istedi. Ayrıca bu tür başvuruyla katılımcı alınan programlarda engelli kotasının olmasının da faydalı olacağını söyledi.

# Եկեք մտածենք այս մասին ....

Արմինե Սադիկյանի

Մենք հասնում ենք Թուրքիայում կազմակերպված Յավաշ Կամաց ամառային դպրոցի ավարտին: Մյուս տարի այն տեղի կունենա Հայաստանում, եւ այն կհյուրընկալի ՀՔԱ Վանաձորի գրասենյակը: Օգտվելով հնարավորությունից՝ փոքր-ինչ ներկայացնեմ կազմակերպությունը:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ժողովրդավարության, հանդուրժողության, բազմակարծության և մարդու իրավունքների գերակայության սկզբունքները արժեվորող անհատների միավորող հասարակական կազմակերպություն է: Նրա հիմնական գործունեությունն ուղղված է մարդու իրավունքների պաշտպանությանը, խաղաղասիրությանն ու քաղաքացիական նախաձեռնությունների խթանմանը՝ մշտապես նպատակ ունենալով ընդլայնել և հզորացնել դրանք:

Կազմակերպությունը հիմնադրվել է 1998 թ-ին և հենց հիմնադրման օրվանից սկսել է գործել մեկուսացված հասարակությունների միջեւ փոխվստահության և երկխոսություն ձեւավորելու ուղղությամբ:

Կազմակերպությունը բազմաթիվ ծրագրեր է իրականացրել հայ-թուրքական, հայ-ադրբեջանական և հայ-վրացական հասարակությունների ներկայացուցիչների միջեւ համագործակցություն ձեւավորելու և նրանց իրավապաշտպանական ու խաղաղասիրական գործունեության մեջ ընդգրկելու  նպատակով:

Նման գործունեություն ծավալելով մի երկրում, որտեղ կան բազմաթիվ չլուծված խնդիրներ, խնդիրներ մարդու իրավունքների առումով, բավականին դժվար է աշխատել և չարժանանալ բազմաթիվ քննադատությունների: Հատկապես, երբ համագործակցում ես հայ հասարակության մի մասի կողմից <<թշնամի>> համարվող ժողովրդի ներկայացուցիչների հետ:

Սակայն, կարծում եմ, որ երբեք չպետք է կասկածել, որ գործին նվիրված փոքրիկ խումբն անգամ կարող է փոխել աշխարհը:

Այսօր այլեւս անհրաժեշտ է քայլ առ քայլ ճեղքել հայերի և թուրքերի միջեւ գտնվող պատը և սկսել երկխոսությունը կամ շարունակել զարգացնել գոյություն ունեցող հարաբերությունները այս երկու երկրների հասարակությունների միջեւ: Չեմ ուզում, որ, ինչպես ամառային դպրոցի ընթացքում հնչեց մասնակիցներից մեկի կողմից, <<պատմական աղտոտվածությունը>> ազդի հասարակությունների հոգեվիճակի և հարաբերությունների վրա, չեմ ուզում, որ թուրք և հայ բառերը լինեն հայհոյանք միմյանց համար:  Յուրաքանչյուր նման հանդիպում համարում եմ արժեքավոր:

Ինչպես հանրահայտ իրավապաշտպան Վացլավ Հավելն է ասել, նրանք, ովքեր ասում են, որ անհատները անկարող են փոխել ինչ-որ բան, միայն պատճառաբանություններ են փնտրում:

Եկեք մտածենք այս մասին ...